ՓԱՅԼԱԿ ԾԻԱԾԱՆ

ԾԽՆԵԼՈՒՅԶՆԵՐ...

Հեքիաթ դարձած հսկաների նման հպարտ
Սլաքվել են երկինքն ի վեր
Հայրենական իմ աշխարհի
Ծխնելույզներն անհամար...
Ստեղծումի վսեմագույն այս օրերին
Իրենց անշեջ ու կենսաձույլ հնոցներից
Վստահություն են հերշնչում
Բոլոր մարդկանց հոգիներին:

Երբ նայում եմ պարո՜ւյր-պարո՜ւյր
Երկինք բեղդ գորշ ծխերի բուխ ամպերին,
Հոգիս հրճվում է անսահման,
Եվ կրծքիս տակ նոր հավատ է ծնվում
ուժգին...
Չէ՞ որ նրանք կյանք են տալիս,
Ստեղծում են ծով բարիքներ
Ե՛վ մեզ համար, և՛ գալիք բյուր
սերունդների...

Չէ՞ որ նրանք Հայրենիքիս լայն ընդերքից՝
Հողից, ջրից, լեռ ու քարից
Վերբերում են անտակ գանձեր...

Ծխնելույզնե՞ր իմ հայրենի,
Այնքան մոտիկ ու մտերիմ մեզ ամենքիս.
Թվում է թե, առանց ձեզի
Աննհար է ապրել անգամ:

Չէի ուզում հիշել թեև,
Բայց ակամա սիրտս բացվեց...
Հին օրերում դարձյալ ծուխ էր բարձրանում
Հայաստանի երկինքն ի վեր,
Սակայն ծուխն այդ չէր ստեղծում,
Այլ մոխրացնում ժողովրդիս վաստակը մեծ,
Զորացնում էր կանաչը մով
Ու խորտակում և՛ տուն, և՛ կյանք...

Այսօր սակայն
Երկրից երկինք կամուրջ ձգած
Ծխնելույզներն այս ծխանի,
Ծխով հանդարտ և անվարան,
Ակնաղբյուրն են երջանկության
Եվ կենսուրախ ժողովրդիս
Լուսաշավիղ ապագայի ուղին նշող
Աշտարակները՝ երկնաձիգ...